

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ. Բանասերը, գիտնականը, մանկավարժը: Կենսամատենագիտություն: Ծննդյան 75-ամյակի առթիվ, կազմող՝ Ս. Գրիգորյան, Երևան, «Զանգակ», 2017, 200 էջ:

2017 թ. փետրվարի 14-ին ծննդյան 75-ամյա հոբելյանը բոլորեց Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, «Պատմաբանասիրական հանդեսի» խմբագրական խորհրդի անդամ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աելիտա Գուրգենի Դոլուխանյանը:



Ա. Դոլուխանյանի ծննդյան 75-ամյակի կապակցությամբ օրերս լույս է տեսել գիտնական-մանկավարժի «Կենսամատենագիտությունը», որն ընթերցեցի մեկ շնչով և չնվազող հետաքրքրությամբ: Ընթերցողի մոտ կարող է հարց ծագել, թե ինչ գործ ունեւ ես՝ պրոֆեսիոնալիզմը չափազանց բարձր գնահատող երաժշտագետու, գրականագիտական հրատարակչության հետ: Բանն այն է, որ Ա. Դոլուխանյանը հատկապես վերջին տարիներին սերտորեն կապված է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հետ: Նշենք բազմաթիվ փաստերից երկուսը. 2012 թ. հունիսի 21-ին Արվեստի ինստիտուտը գումարեց Սայաթ-Նովայի ծննդյան 300-ամյակին նվիրված հոբելյանական գիտական նստաշրջան, որի աշխատանքներին «Չարլզ Դաուսերթի «Սայաթ-Նովա» աշխատությունը» հետաքրքիր զեկուցումով մասնակցեց Ա. Դոլուխանյանը:

Նույն թվականին հրատարակվեց նստաշրջանի զեկուցումների ժողովածուն. Ա. Դոլուխանյանն ընդգրկվեց խմբագրական խորհրդի կազմում:

2014 թ. դեկտեմբերի 12-ին Արվեստի ինստիտուտը գումարեց «Տիգրան Չուխաճյանի ստեղծագործությունը» գիտական նստաշրջանը. ««Արշակ Երկրորդ» օպերայի գուլակյանական լիբրետոն» զեկուցման մեջ Ա. Դոլուխանյանը խոր վերլուծության ենթարկեց հայոց անդրանիկ օպերայի գուլակյանական լիբրետոն հայ և օտար պատմիչների թողած աղբյուրների ուսումնասիրության համատեքստում: 2015-ին հրատարակվեց «Տիգրան Չուխաճյանի ստեղծագործությունը» գիտական նստաշրջանի նյութերի ժողովածուն. Ա. Դոլուխանյանը վերստին ընդգրկվեց խմբագրական խորհրդի կազմում:

«Կենսամատենագիտությունը» հրատարակվել է ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ: Ի դեպ՝ հայ գրականագիտության այս կենտրոնի հետ հորեյարի գիտաստեղծագործական համագործակցությունը սկիզբ է առել տասնամյակների հեռվից: 1989 թ. Ա. Դոլուխանյանը պաշտպանում է «Հոգու և մարմնի պրոբլեմը միջնադարի հայ քնարերգության մեջ» թեմայով դոկտորական դիսերտացիան. առաջատար կազմակերպությունն էր հենց այս ինստիտուտը, որն այդ տարիներին ղեկավարում էր ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Էդվարդ Ջրբաշյանը:

Անվանի հայագետը երկար տարիներ ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող գիտական աստիճանաշնորհման «Գրականագիտություն» 003 մասնագիտական խորհրդի անդամ է, բազմիցս հանդես է եկել ընդդիմախոսականներով, որոնց ցանկը զետեղված է գրախոսվող գրքի 34–35 էջերում: Ա. Դոլուխանյանի մենագրություններից երկուսը՝ «Проблема души и тела в средневековой армянской поэзии» (2008) և «Ալիսիա Կիրակոսյանի քնարերգությունը» (2016), հրատարակության է երաշխավորել Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհուրդը:

Գրախոսվող գրքի խմբագիրն է բանասիրական գիտությունների դոկտոր Անուշավան Ջաքարյանը, ում խմբագրությամբ է 2008-ին հրատարակվել Ա. Դոլուխանյանի «Проблема души и тела в средневековой армянской поэзии» աշխատությունը, որը, խմբագրի կարծիքով, «նոր խոսք էր միջնադարյան հայ քնարերգության ուսումնասիրության պատմության մեջ»: «Պատմաբանասիրական հանդեսում» տպագրվել է Ա. Ջաքարյանի գրախոսականը Ա. Դոլուխանյանի «Ֆրեդերիկ Մակլերը՝ հայագետ» աշխատության վերաբերյալ: Ա. Դոլուխանյանի ծննդյան 70-ամյա հորեյանի կապակցությամբ Ա. Ջաքարյանի «Անվանի հայագետն ու վաստակաշատ մանկավարժը (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աելիտա Դոլուխանյանի ծննդյան 70 և գիտամանկավարժական 45-ամյակի առթիվ)» հոդվածը տպագրվել է ԳԱԱ «Գիտություն» թերթի 2012 թ. երկրորդ համարում, իսկ «Հանրաճանաչ հայագետ-մանկավարժը (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աելիտա Դոլուխանյանի ծննդյան 70-ամյակի առթիվ)» հոդվածը՝ «Լրաբեր հասարակական գիտությունների» գիտական պարբերականի 2012 թ. առաջին համարում: Ա. Դոլուխանյանի ծննդյան 75-ամյակի կապակցությամբ «Գիտություն» թերթի 2017 թ. երրորդ համարում տպագրվել է Ա. Ջաքարյանի «Վաստակաշատ հայագետն ու մանկավարժը» հորեյանական հոդվածը:

Երկու գրականագետների գիտաստեղծագործական համագործակցությունն այսքանով չի սահմանափակվում. Ա. Դոլուխանյանը գրախոսականներ է գրել Ա. Ջաքարյանի «Трагедия армянского народа в оценке русских литераторов» («Գրական թերթ», 2004, թիվ 16) և «Մերզեյ Գորոդեցկին Արևմտյան Հայաստանում և Անդրկով-

կասում» («Պատմաբանասիրական հանդես», 2016, № 1, էջ 228–233) արժեքավոր ուսումնասիրությունների վերաբերյալ:

Ինքնատիպ և ուշագրավ է գրախոսվող գրքի կառուցվածքը, որի կազմողն է Հայաստանի ազգային գրադարանի մատենագիտության և գրադարանագիտության բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու Մայա Գրիգորյանը, ում «Կազմողի կողմից» եռալեզու տեքստով էլ ընթերցողը մուտք է գործում դոլուխանյանական աշխարհ:

Գրականագետին իրենց շնորհավորական ուղերձներն են հղել ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը, Ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակյանը, ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը, ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, ինչպես նաև՝ հոբեյարի հարազատ օջախի, նրա alma mater-ի՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը, որոնց մաղթանքներն ավելի մանրամասն ընթերցողը կարող է կարդալ գրախոսվող գրքում: Ի դեպ՝ հոբեյարը ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի 70-ամյա պատմության մեջ առաջին կին անդամն է:

Ա. Դոլուխանյանի անցած բեղմնավոր ուղուն՝ փաստերի ու թվերի անդրադարձից առաջ ընթերցողին է ներկայացվում ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր Վարդան Դերիկյանի «Հայ գրականության համակողմանի ուսումնասիրողը» վերլուծական հոդվածը: Ի դեպ՝ Վ. Դերիկյանի համագործակցությունը հոբեյարի հետ նույնպես գալիս է տարիների հեռվից: Վ. Դերիկյանը նրա գրքերից մի քանիսի, այդ թվում՝ «Եվրոպացի հայագետները Մաշտոցի և հայոց այբուբենի մասին» (2005) և «Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ» (2008), խմբագիրն է: Վ. Դերիկյանն է հեղինակել «Պատմաբանասիրական հանդեսի» 2017 թ. առաջին համարում լույս տեսած «Հայ գրականության համակողմանի ուսումնասիրողը» հոբեյանական հոդվածը: Ա. Դոլուխանյանն էլ, իր հերթին, գրախոսել է Վ. Դերիկյանի գրքերից մի քանիսը:

«Մենագրություններ» բաժնում (էջ 36–52) ներկայացված են հոբեյարի՝ 1987–2016 թթ. հրատարակված մենագրությունները՝ ժամանակագրական կարգով: Այստեղ դրանք ոչ միայն պարզապես թվարկված են, այլև ներկայացված է դրանց բովանդակության ցանկը, ինչի շնորհիվ ընթերցողը լիարժեք պատկերացում է կազմում աշխատության մասին: Յուրաքանչյուր գրքի անդրադարձին հաջորդում է պարբերական ու գիտական մամուլում դրա վերաբերյալ լույս տեսած գրախոսությունների ցանկը, ինչի շնորհիվ ակնհայտ է դառնում Ա. Դոլուխանյանի հեղինակած գրքերի կարևոր նշանակությունը հայագիտության համար:

Ուշագրավ է, որ հեղինակի ուսումնասիրություններն ունեն նվիրումներ: Այսպես՝ «Եվրոպացի հայագետներ» մատենաշարի առաջին հատորը՝ «Ֆելիքս Նևր և հայ քրիստոնեական մատենագրությունը» (2001), «Անսահման սիրով և երախտագիտությամբ նվիրվում է բոլոր օտարազգի հայագետներին՝ անցյալի, ներկայի և ապագայի»: Մատենաշարի երկրորդ՝ «Մարի Ֆելիսիտե Բրոսսեն հայագետ», հատորը (2002) «Նվիրվում է անվանի հայագետ Մարի Բրոսսեի ծննդյան 200-ամյակին»: Մատենաշարի երրորդ՝ «Վիկտոր Լանգլուան հայագետ» հատորը (2003) հեղինակը նվիրել է եղբոր՝ Լևոն Գուրգենի Դոլուխանյանի պայծառ հիշատակին: Մատենաշարի չորրորդ՝ «Էդուարդ Դյուլորիեն հայագետ», հատորը (2004) Ա. Դոլուխանյանը նվիրել է իր «ընտանեկան սրբություններին»՝ հոր՝ Գուրգեն Դոլուխանյանի, մոր՝ Ադավնի Սարուխանյանի և ավագ եղբոր՝ Լևոն Դոլուխանյանի պայծառ հիշատակին: Ի դեպ՝ նրա հայրը եղել է Միսիանի շրջանային սովետի գործադիր կոմիտեի նախագահը, այնուհետև՝ ՀԿԿ Ազգաբեկուվի (ներկայումս՝ Վայք) շրջանային կոմիտեի առաջին քարտուղարը, իսկ մայրը՝ շրջկենտրոնի դպրոցի ուսմասվարը, և նրանց ընտանեկան մթնոլորտն է նպաստել ապագա գիտնական-մանկավարժի ձևավորմանը: Մատենաշարի հինգերորդ՝ «Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ», հատորը (2008) նվիրված է «Հայ ժողովրդի մեծ բարեկամ Ֆրեդերիկ Ֆեյդիի ծննդյան 100-ամյա հոբելյանին»:

Թերթելով «Կենսամատենագիտությունը»՝ ընթերցողը ծանոթանում է «Քննական բնագրերի հիման վրա ստեղծված գրքերի» (էջ 53), «Ուսումնական ձեռնարկների» (էջ 54–55) և գիտական պարբերականներում ու ժողովածուներում, հանրագիտարաններում և մամուլում հրատարակված գիտական հոդվածների ցանկերին (էջ 56–88):

Առանձին ներկայացված են Ա. Դոլուխանյանի խմբագրած, առաջաբանած ու կազմած գրքերի (էջ 89–92) և գրաքննադատական հոդվածների (գրախոսությունների) (էջ 93–110) ցանկերը, ինչպես նաև՝ «Ուղեգրությունները» (էջ 113–114) ու «Հարցազրույցները» (էջ 115–116):

«Ա. Դոլուխանյանը կարծիքների կիզակետում» բաժնում (էջ 117–123) ընթերցողը ծանոթանում է նրա մասին առկա գրականությանը:

Այնուհետև խոսքը տրվում է Ա. Դոլուխանյանի գործընկերներին՝ Հայաստանի գրողների միության նախագահ, բանաստեղծ Էդվարդ Միլիտոնյանին, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրավարդ Հակոբյանին, բանասիրական գիտությունների դոկտոր, գրող Նորայր Ադայանին, բանասիրական գիտությունների դոկտորներ Անուշավան Զաքարյանին և Վարդան Դերիկյանին, բանաստեղծ, արձակագիր Սամվել Կոսյանին և բանաստեղծ, մանկագիր Լիպարիտ Սարգսյանին (էջ 124–143), ովքեր տարբեր առիթներով իրենց կարծիքներն են հայտնել Ա. Դոլուխանյանի մասին:

«Շնորհավորանքներ սաներից» բաժնում ներկայացված են Ա. Դոլուխանյանի հմուտ և խստապահանջ գիտական դեկավարությամբ առաջին քայլերը կատարած նրա դիսերտանտների կարծիքները, ովքեր այսօր էլ տարիներ անց, երախտագիտությամբ են հիշում իրենց Ուսուցչին: Խոսքը Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հենակետային հիմնական դպրոցի տնօրեն, մանկավարժական գիտությունների թեկնածու Նաիրա Տողանյանի, ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Լիլիթ Հովսեփյանի, Հելսինկիում ապրող բանասիրական գիտությունների թեկնածու Նաիրա Թամամյանի, ՀՀ ԿԳ նախարարի խորհրդական, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Պարույր Սահակյանի և մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Գայանե Մարոյանի շնորհավորանքի և շնորհակալանքի խոսքերի մասին է (էջ 144–155):

«Կենսամատենագիտությունն» ընթերցողին է ներկայացնում Ա. Դոլուխանյանի բազմանիստ գործունեության ևս մեկ, թերևս, քչերին հայտնի, շերտերից մեկը: Խոսքը նրա՝ ռուսերենի, ֆրանսերենի և անգլերենի խոր իմացության վրա խարսխված թարգմանչական գործունեության մասին է, ինչը մի կողմից արտաստվոր է հետազոտող գիտնականի ու մանկավարժի համար, բայց մյուս կողմից էլ՝ միանգամայն տրամաբանական ու բնորոշ բանաստեղծական նուրբ զգացողությամբ օժտված արվեստագետի համար: «Ա. Դոլուխանյանը՝ թարգմանիչ» բաժնում (էջ 111–112) ընթերցողը ծանոթանում է ֆրանսերենից նրա կատարած թարգմանությունների հրատարակությունների ցանկին, իսկ գրքի ընթերցումն ավարտում՝ կարդալով Ռոբերտ Բրնսի «Իմ սիրտը լեռներում է» անտիպ թարգմանությունը՝ կատարված Վիլյամ Մարոյանի համանուն պիեսի անգլերեն բնագրից (էջ 198):

«Կենսամատենագիտությունը» եզրափակում է պատկերաշարը (էջ 156–188). լուսանկարները ներկայացնում են ակնթարթներ՝ Ա. Դոլուխանյանի կյանքից ու բազմաբնույթ գործունեությունից:

Հատկապես պետք է ընդգծեն հրատարակության պոլիգրաֆիական բարձր որակը, որն իրականացրել է «Զանգակ-97» հրատարակչությունը:

Ավարտելով խոսքս՝ ուզում եմ ընթերցողին խորհուրդ տալ գտնել գրախոսվող գիրքը և ծանոթանալ հայագիտության նվիրյալի ու հմուտ մանկավարժի գիտական, մանկավարժական և հասարակական վաստակին:

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ